Հ-88

Ց. Ս. ՔՈՒԹՆԵՐԵԱՆ

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ
Տպարան Ս. Ց. Աւագեանի
1907

Ց. Ս. ՀՈՒՇԵՐԵԱՆ

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆ
Տպարան Ս. Յ. Ա. ագիանի
1907

Печ. дозв. тип. С. Я. Авакова, Нахичевань н-Д.

Sine ira et studio.

Առաջադրելով յետագայ տողերը հայ հասարակութեան դատաստանին, ես դիտաւորութիւն չունիմ անձնականի դիպչելու և հեռու եմ այդ մտքից։ Իմ միակ նպատակն է ապացուցանել, որ Քիշնևի մեր Կոնսիստորիան, ոչպէս հիմնարկութիւն, բոլորովին կլանված է իւր բարօրութեան շահերից, իսկ ժողովրդի շահերը նա անվերջ ժխտում է։ Կարելի է սրանում գրվածը այնպէս կենդանի կերպով ու ջերմ չը հեռաքրքրէ առհասարակ բոլոր հայերին (որովհետև այս տողերը գրելու առիթը տրված է Ղրիմի հայերի շահերի խանգարմամբ), բայց այն, ինչ որ կարելի կլինի էլի մի անգամ ասել (թէպէտ դա նոր բան մը չէ) մեր հոգևոր հայրերի մասին, իհարկէ, բացառութիւններով, համարձակութիւն է տալիս ինձ ծանօթացնելու իմ եղբայրներին Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի Հոգևոր Կոնսիստորիայի ներկայացուցիչների գործելու եղանակի հետ, այն Կոնսիստորիայի, որը սրտմտում է

ամեն անգամ, երբ հասարակութիւնը գէթ որ և է չնչին նշաններ է ցոյց տալիս ստուգելու այդ յետամնաց, բիւրոկրատիկ, աւանդամոլ, ըէակցիոն և շահամոլ հիմնարկութեան գործողութիւնները։

Յ. ՔՈՒՇՆԱՐԵԱՆ.

Սիմֆերոպոլ.

Եթէ Տէրն-Աստուած մեզ հոգևորականներիս վրա ուղարկէր համաճարակ հիւանդութիւն խօլերայի կամ ժանդախտի նման և մենք՝ բոլոր հոգևորականներս, ես էլ նրանց հետ, ոչնչանայինք, այն ժամանակ հայոց ազգը ապստ շունչ կառնէր։

Խորէն-Մեսրոպի խօսքերը։
«Մշակ», № 5 – 1907.

Միայն այն ժամանակ կարելիէ (ճիշտ) գաղափար կազմել մարդկանց հայեացքների, յոյսերի, ակնկալութիւնների, պահանջների մասին, երբ նրանց հետ յաճախակի և մօտիկ յարաբերութիւն ես ունենում։ Մօտիկ յարաբերութեան այդպիսի պայմանների մէջ եմ դրված ես, որպէս երէցփոխ, հոգևորականութեան վերաբերմամբ։ Նայեցէք, որպիսի տիպերի հետ պէտք է լինում հանդիպել, ինչպիսի հակումների հետ կուել և ինչպիսի խոչընդոտների պատահել ժողովրդին մի օգտակար բան անելու համար։ Մեր հայ հոգևորականութիւնը (Ղրիմում), լինելով մեծաւ մասամբ տգէտ և անչափ քիչ կրթված, օգտվում է (ոչ ըստ արժանաւորութեան) աւելի մեծ բարեբախտութեամբ, քան մեր հոգևորականութիւնը Կովկասում։ Մինչդեռ նրա համար ամեն բան քիչ է ու քիչ է։ Մեծաւ մասամբ անկուլտուր և համարեա ոչ մի կրթութիւն չը

ստայած, նա հոգևոր հայր է դառնում ժողովրդին, որը ծարաւի է գիտութեան ու ճշմարտութեան լոյսին, և նա գրեթէ ամբողջապէս դժգոհ է իւր նիւթական ապահովութիւնից։ Ստանալով ծխականներից ծեսերի համար այնպիսի գումարներ, որպիսիները յաճախ չէ ստանում բարձրագոյն կրթված մարդը, նա միշտ գանգատվում է, թէ վատ է ապրում։

Իհարկէ՝ այդ ամենը փոխելը մի մարդու կարողութիւնից վեր է, բայց այդ կանէ ժամանակը, երբ մեր հոգևորականութիւնը իւր ամբողջ մասսայով աւելի կուլտուրական ու կրթուած կը դառնայ։ Բայց որպէս զի մեր սայլը մի տեղում կանգնած չը մնայ, ինձ թւում է, թէ առաջին բեֆորման պէտք է դիպչի Փիշնևի մեր Կոնսիստորիային։ Թէ ինչու ես առաջ ու առաջ դնում եմ Կոնսիստորիայի կերպարանափոխութիւնը, այդ կը տեսնենք այն դերից, որը նա խաղաց Հին Ղրիմի վանքապատկան հողերը կապալով տալու գործում։

Ընթերցողս, մի կողմ դնելով այդ գործի բոլոր մանրամասնութիւնները և 'ի նկատի ունենալով, որ հողը վերջ ի վերջոյ տրված է կողմնակի մի մարդու, կը տեսնէ, որ Կոնսիստորիան հողերը տվել է կողմնակի մի մարդու միայն և

եթ աւելի ստանալու համար։ Իսկ ապացոյցնե-
ը այն անձերի, որոնք ուզեցին կապալով վեր-
ցնել հողը հայերով բնակեցնելու համար և նրա-
նից ստացվելու օգուտը յատկացնելու երկու
ուսումնարանների, չը յարգվեցին միայն նրա
համար, որ առաջարկված կապալագնից Կոնսիս-
տորիան պակաս կը ստանար։ Իմ խորին համոզ-
մունքն այն է, որ հողը մի խումբ մարդկանց
կապալով չը տալու գործում յանցաւոր է Կոն-
սիստորիան, որպէս հիմնարկութիւն, իսկ նրա ա-
ռանձին անդամները արժանի չեն այն ուշադրու-
թեան, որին նրանք պէտք է արժանանային, ե-
թէ իրանց կոչման բարձրութեան վրա կանգնած
լինէին։ Եթէ Կոնսիստորիան չօգտվեց այնպիսի
հիանալի մոմէնտից, երբ նա կարող էր ապա-
յուցանել իւր պատրաստակամութիւնը՝ աշխա-
տելու հասարակութեան օգտին, էլ ինչ սպասել
այդպիսի հիմնարկութիւնից, եթէ ոչ անձնական
բարօրութեան հետամտութիւն։ Մինչդեռ երբ
Կոնսիստորիան թողնէր իւր շահերը (մանաւանդ
որ թողնելու բան էլ չը կար, որովհետև մի խումբ
անձերը առաջարկում էին հողի համար աւելի
մեծ գին, քան կապալի գինը վերջին տարում,
բայց պակաս, քան թէ այժմ տրված է) այն ժա-

մանակ, ի հարկէ, մենք հայերս անկասկած կը գնահատէինք Կոնսիստորիայի անշահասիրութիւնը։

Այս բրոշիւրում ներքև զետեղուած լրագրական՝բանակուից ընթերցողը կը տեսնէ, թէ ինչպէս անվայել պահեց իրան Կոնսիստորիան հողը կապալով տալու գործում և ինչպիսի աղմուկ յարուցեց այն հարցումների տրիթով (համարձակ կասեմ—հիմնաւոր հարցումների), որ տրվեցին նրա վարմունքի համար այդ գործում։ Բանը այնտեղ հասաւ, որ Կոնսիստորը գրաւոր կերպով դիմեց Արմենական քահանային հետևեալ խօսքերն անփոփոխ թղթով. ,,Ձեր ժողովրդին էլ յանձնում՝ ենք Ձեր հայրական յորդորներին։ Թող ազնիւ լինեն, իսկական հայրենասէր, անարդար անկարգութիւններից հեռու մնան, որ սիրելի լինեն իրանց աչքում՝ և հարգելի օտարների աչքում՝՝։

Ես չը գիտեմ, թէ ինչպէս վարվեց Արմենական քահանան, բայց ինձ թւում է, թէ նա իւր հովվեալներից պէտք էր սատանար մի լաւ պատասխան, որը զուցէ սատրագրութեան զգացմունքից դրդված չը հաղորդեց ըստ պատկանելոյն։ Վերլուծենք կէտ առ կէտ իշխանաւորական թղթի այդ 2-3 ֆրազերը. ,,Ձեր ժողովրդին էլ յանձնում ենք Ձեր հայրական յորդորներին՝՝։

Անցել են այն ժամանակները, երբ հովվեալ-ները ականջ էին դնում հոգևոր հայրերի յոր-դորանքներին. դա այն ժամանակ էր, երբ ժո-ղովուրդն իւր զարգացմամբ հոգևոր հայրերից ստոր էր կանգնած. հիմա արդէն այն չէ. ժո-ղովուրդը աւելի առաջ է գնացել զարգացման ճամբով, քան թէ նրա հոգևոր հայրերը։ Նա լսել էլ չէ ուզում յորդորանքներին այն մարդկանց, որոնք զարգացմամբ իրանից բարձր չեն։

,,Թող ազնիւ լինեն,,։ Իսկ ինքը Կոնսիստո-ռիան ազնիւ էր, հարցնում եմ ես։ Զը գիտեմ, կը գտնվի արդեօք մի մարդ, որը գէթ մի խօսք ասէր 'ի պաշտպանութիւն Կոնսիստորիային, որը յոյս տածեց երկու հազար ռուբլի (աւելորդ) ստանալու համար և դրա համար՝ 1) երկու ու-սուցիչարան զրկեց նպաստից, 2) հնարաւորութիւն չը տվեց խեղճ հողագործներին բնակեցնել հո-ղը, մինչդեռ Կոնսիստորիան ոչինչ չէր կորցնի, այլ ընդհակառակը կը ստանար 1000 ռուբլուց աւելի, քան առաջվայ կապալագինը։

,,Թող լինեն իսկական հայրենասէր,,։

Ծաղր չէ՞ միթէ սա։ Ինքը Կոնսիստորիան խորհուրդ է տալիս ուրիշներին հայրենասէրներ լինել, իսկ հէնց ինքը այնպիսի մի քայլ է անում, որ ոչ մի դէպքում չէ կարող ցոյց տալ Կոնսիս-

տորիայի հայրենասիրութիւնը։ 2000 բուլու համար նա զրկում է հովվեալներին հողի վրա նստելու հեռանկարից և երկու ուսումնարան նպաստ ստանալուց, և դեռ համարձակվում է խօսել հայրենասիրութեան մասին։

,,Անարդար անկարգութիւններից հեռու մնան''։ Իսկապէս ասած ես չեմ հասկանում, թէ ինչ է այդ ,,անարդար անկարգութիւնները''։ Եթէ Կոնսիստորիան ակնարկում է հովվեալների երկրորդ դիմումի վրա (հողը պ. Սափաքին տրվելուց յետոյ), որ հողը տրվի իրանց, դրա համար Կոնսիստորիան նրանց շնորհակալ պէտք է լինի, որովհետև նրանք հնարաւորութիւն տվին Կոնսիստորիային սթափվելու սխալ քայլից։ Բայց Կոնսիստորիան այս անգամ էլ խուլ մնաց և հողը տվեց պ. Սափաքին։

,,Որ սիրելի լինեն իրանց աչքում՝ եւ յարգելի օտարների աչքում''։

Դէ, այդպիսի բարոյախօսութիւն կարդալ կարելի է երեխաներին և ոչ թէ հասակաւոր մարդկանց։ Ես խորհուրդ կը տայի, որ ինքը Կոնսիստորիան ,,սիրելի լինէր իւր ժողովրդի աչքում''։

Գայթակղութեան չը դիմանալով՝ ես առաջ կը բերեմ նոյն թղթից հետևեալը. ,,տուսի Կոն-

սիստորիայն կը զիջանի (!) յօգուտ Ժողովրդի տալ Օղի-Խիչուչի հողը նոյն գնով, նոյն պայմաններով, եթէ պ. Սափաքի հետ փոխադարձ համաձայնութիւն կայացնէր եւ նրանից վերցնէր, մինչեւ անգամ կարելի կլինի երեք տարի եւս աւելացնել։ (ուշառատաձեռն դարձաւ)։

Իսկոյն երևում է, որ այդ գրողները ոչ թէ գործի մարդիկ են, այլ բիւրօկրատներ։ Ախր՝ եթէ մենք կամենայինք հողը 10000 բուբլով առնել, միթէ մենք ինքներս չէինք գտնի պ. Սափաքի ճամբան։ Վերոյիշեալն ասելով Կոնսիստորիան կարծում է, թէ նա էլի շատ բան արեց, որպէս զի հողը իւրայիններին ձեռքն ընկնէր և նոյն իսկ առատաձեռնութիւն ցոյց տվեց, աւելացրեց երեք տարի ժամանակամիջոց։

Եթէ ես ուզէի վերլուծել Կոնսիստորիայի ամբողջ հոչակաւոր թուղթը, նրա դերը կը պարզվէր էլ աւելի ցաւալի, բայց տասածս էլ բաւական է, որ ընդունենք այն ակսիման թէ մեր Կոնսիստորիան միայն և եթ իւր մասին է մտածում, իսկ ժողովրդի շահերի վրա—,,մի լաւ թքել եմ‹‹ *)։

. Եթէ իմ ընթերցողը չը հոգնեց և եթէ հե-

---

*) Տես բրոշիւրիս վերջի էջերում «Մշակի» մէջ տպուած նամակս. «Քիշնեվի հայոց կոնսիստորի տեղափոխութեան հարցը»։

*տաքրքրվում է ազգային գործերով, այս բրոշիւ-
րի հետաքրքիր մասն էլ կը կարդայ։*

Յ. ՔՈՒՇՆԱՐԵԱՆ.

ԱՆՀԱՄԿԱՆԱԼԻ Է

(Նամակ խմբագրութեան)

Մայիսի 7-ին 1906 թ. Սիմֆերօպոլի ծխական դպրոցի դահլիճում նշանակված էր Պերեկոպի գաւառում գտված 2700 դեսեատին Խրիմի Սուրբ Խաչ վանքին պատկանող հողի կապալով տալու աճուրդը։ Այս հողի նախկին կապալը վերցրել էր հանգուցեալ պ. Սպենդիարեանը 7000 ռուբլով և իր կողմից տուել գիւղացիներին աւելի բարձր գնով։ Աճուրդը կատարելու համար Բեսարաբիայի թեմի առաջնորդի կողմից եկած լիազօր Բենիկ վարդապետին ներկայանալով Սիմֆերօպոլի և Օրբազարի հայ հասարակութիւններից մի քանի անձնաւորութիւններ, առաջարկեցին հետևեալը. տալ իրանց կապալով այդ հողը այն պայմանով, որ սրանք իրանց կողմից բաժանեն այդ հողը գաղթական հայ հողագործների մէջ էժան գնով, իսկ եղած օգուտը յատկացնել յիշեալ երկու քաղաքների ծխական դպրոցներին։ Նրանք պարտաւորվում էին նոյնպէս հոգալ գիւղացիների տնտեսութեան վերաբերեալ բոլոր պարագաների պէտքերը։

Այս առաջարկութիւնը սկզբից առաջնորդի լիազօր վարդապետը հաւանութեամբ ընդունեց

և որովհետև նա միշտ կրկնում էր, որ կապալագինը ամբողջովին ծախսում է կոնսիստորիայի ապահովութեան և վանքի այլ պէտքերի վրա և 7000 բուբլին այդ պէտքերին չի բաւի, կապալառուներից անընդհատ «բարեխղճութիւն» էր հայցում։ Կապալառուները համաձայնվեցին աւելացնել կապալագինը և հասցրին 8000 բուբլու, միայն այն պայմանով, որ կապալի ժամանակամիջոցը աւելացնվի, որովհետև նշանակված (աճուրդի) վեց տարի ժամանակամիջոցում չէր կարելի արդարացնել արված ծախքերը, նամանաւանդ եթէ ի նկատ առնվեն նաև անբարեյաջող տարիներ։ Այս պայմանները իսկոյն հեռագրով յայտնեցին առաջնորդին։ Մինչ այս՝ եկաւ և մայիսի 11-ը կրկնաճուրդի օրը (աճուրդը մայիսի 7-ին չը կայացաւ կապալառու չը լինելու պատճառով)։ Իսկ այդ բոլոր ժամանակը (7—11 մայիս) վերոյիշեալ անձանց և լիազօրի միջև շարունակվում էին բանակցութիւնները։

Կար միայն մի հանգամանք, որը ոչ ոք հասկանալ չը կարողացաւ։ Լիազօրի խօսքերի համաձայն առաջնորդը իր համաձայնութիւնն էր տուել հեռագրով հողը տալու 8000 բուբլով և 10 տարի ժամանակով, իսկ յետոյ լիազօրը յայտնեց, իբր թէ առաջնորդը հեռագրով առաջար-

կում է հողը տալ 9000 բուբլով, սակայն կապալառուներից ոչ ոք չը կարողացաւ տեսնել այդ հեռագիրները։ Երբ բանակցութիւնները սկսեցին սուր կերպարանք ստանալ, լիազօրը սկսեց ամբաստանել կապալառուներին համախմբման (стачка) մէջ։ Այս ամբաստանութիւնը խիստ անիրաւացի և անհիմն էր և ծիծաղելի, այն հասարակ պատճառով, որ յիշեալ կապալառուները սովորական կապալառուների պէս ոչ թէ իրանց անձնական շահերին պիտի հետամուտ լինէին, այլ երկու (մեր կարծիքով—գովելի) գործ էին ցանկանում միայն իրագործել. նախ առանց հողի մնացած աղքատ գիւղացիներին էժան գնով հող մատակարարել և ապա՝ մի որևէ բանով օգնել՝ երկու աղքատ հայ դպրոցների։ Բացի անձնական շահերի բացակայութիւնից, կապալառուները իրանց վրա էին վերցնում նաև մի ահագին ծանրութիւն—գլխացաւանք, որը չէր բացասում, նաև առաջնորդի լիազօրը։

Այսպէս թէ այնպէս, բայց լիազօրի նախկին համակրանքը դէպի այդ գովելի գործի ձեռնարկութիւնը սկսեց նուազել, որովհետև մի ինչ որ անհասկանալի պատճառով 8000-ի փոխարէն 9000 բուբլու պահանջը երևան եկաւ, համեմված «բարեխղճութեան» ազերսանքներով։ Եւ

կարծես հասարակական այս գործը բոլորովին նշանակութիւն չունէր հոգևոր կառավարութեան համար, չը նայած նրան, որ հոգևորականութիւնը ամբողջովին մեր հասարակութեան շինքին է։ Վերջապէս երբ ոչ մի համաձայնութիւն նրանց մէջ չը կայացաւ, լիազօրը յայտնեց, որ աճուրդը նա կը կայացնէ Քիշնևում և որ լիայոյս է, որ հողը կը տրվի աւելի բարձր գնով։ Իսկ միթէ վերոյիշեալ կապալառուների առաջարկութիւնը նմանապէս արժանի չէր լիազօրի բարեխղճութեան և միթէ հայ աղքատ հողագործների շահերը աւելի բարձր գին չունեն։ Այս շատ անհասկանալի է։ *)

Երէցփոխ Յ. Քուշնարեան.

Մշակ 1906 № 136.

ԲԱՑ ՆԱՄԱԿ

(Քիշնևի հայոց հոգևոր կօնսիստորիային)

Սիմֆերոպոլի հայոց ուսումնարանում մայիսի 7—11-ին նշանակված աճուրդը, որով ս. Խաչի վանքին պատկանող հողերը պէտք է կապա-

*) Այս իմ չափաւոր և կօրրէկտ նամակիս Բենիկ վարդապետը տուեց մի երևելի պատասխան, որը ընթերցողս կտեսնէ բրօշուրիս վերջի էջերում։

լով տրվէին, չը կայացաւ։ Մի քանի հոգի, ինչպէս վերև «Անհասկանալի է» յօդուածումս ասել եմ, լիազօր վարդապետին առաջարկեցին, այդ հողերը կապալով տալ իրանց այն պայմաններով, որոնք իրանք հեռագրով առաջարկել էին վիճակաւոր առաջնորդին։ Նրանց պայմանը չընդունվեց։ Բայց առաջարկողները մինչև այժմ չեն կորցնում իրանց յոյսը, որ այդ գործը կաջողվի, ոչ թէ շահասէր նպատակներ ի նկատի ունենալով, այլ—նախ՝ այդ հողերը չունևոր հայ հողագործներով բնակեցնելը, երկրորդ՝ երկու ուսումնարանների դրամական օգնութիւնը և երրորդ՝ (որը ամենագլխաւորն է) հաստատ համոզմունքը, որ այդ հողերը Պետական Դուման հարկադրաբար պէտք է սեպհականութիւնից հանէ։ Այս վերջին դէպքում նրանց առաջարկած կոմբինացիան կատարելապէս շահաւէտ պիտի լինէր կոնսիստորիայի համար, որովհետև հողը, որ բնակեցրված կը լինի հողագործներով, չի խլվի և կոնսիստորիան իւրաքանչիւր տարի կը ստանայ այն եկամուտը, որը նրան առաջարկում էին։

Վերջապէս առաջարկողները խնդրեցին՝ չը լի առաջ ունենալ այն, որ ներկայ դէպքում նրանք չէին հետամտում անձնական շահերի։ Եթէ կոնսիստորիան և լիազօրը սրա վրա ուրիշ

կերպ են նայում, առաջարկողներին մնում է միայն սրտի խորքից ափսոսալ, որ լաւ գործը չէ կարողանում իրականանալ միայն այն պատճառով, որ լիազօրը հարկաւոր ջանք և եռանդ ցոյց չը տուեց առաջարկութեան իսկական աստառը պարզելու համար, այլ ինկատի ունեցաւ միայն և եթ կօնսիստորիայի շահերը, կարծես չունևոր հողագործների շահերը կօնսիստորիայի շահերից բարձր չէին։ Ցամենայն դէպս վերոյիշեալ կոմբինացիան առաջարկողները հետաքրքրվում են իմանալ, արդեօք կօնսիստորիան ինչպէս վերաբերվեց առաջարկած կոմբինացիային։

Եպիսկոպոս Յ. Քուշնարեան.

Մշակ 1906 № 136.

ՁԵՐ ԽՐԱՏՆ Է ՀԻՍԱՆԴ

(Բաց պատասխան Սիմֆերոպոլի Եպիսկոպոս Եակոբ Սերգէիչ Քուշնարեվին)

Եակոբ Սերգէիչ!

Ձեր ամբաստանագիրը նուաստս հասցէին կարդացի «Մշակ» օրագրի № 136-ում։

Զարմանքիս չափ չկայ։ Դուք բարեկիրթ մարդուն անվայել վարմունքով ոտքի տակ էք տալիս և՛ բարեկամութիւն, և՛ արդարութիւն, և՛ յարգանք, և որ գլխաւորն է, սպանում էք ճըշմարտութիւնը և նրա ընկած տեղում ստայօդ շաղախից մի արձան էք կանգնեցնում ձեր անուան ու արժանիքին վայել։

Ինձ պատմել էին, որ դուք ջղերի հիւանդութիւն ունիք, բայց ձեր վարմունքն իմ դէմ ապացուցանում է, որ դուք մի առաւել ծանր հիւանդութիւն ունիք, ձեր խիղճն է հիւանդ։ Եթէ բացարձակ ստել կարող է և ձեր նման բարձրագոյն կրթութիւն (ներեցէք ուսումն պիտի ասէի, այլ ոչ կրթութիւն) ստացած մարդը, էլ ինչ զանազանութիւն ուսումնաւորի և տգէտի մէջ, արիստոկրատի և գեադայի մէջ։ Սուտ է, թէ ես լիազօր իրաւունքներով էի զրկուած կոնսիստորի կողմից։ Եթէ այդպէս լինէր, ես շարունակ հեռագրական դիմումներ չէի անի իմ անմիջական իշխանութեանը, որից շարունակ հրահանգներ էի սպասում։

Ուղիղ է, որ ես ձեզ յորդորում էի բարեխիղճ լինել, երբ նկատում էի, թէ ուսմամբ փքացող պարոնիդ մէջ խիղճը նոյնքան համր է, որքան ձեր երկու գործակիցների մէջ, որոնց դուք

ինձ մոտ, առանձնապէս բռունցք — «кулакъ» անունը տուիք։ Ուրանալու հերոսութիւն էլ ունիք, որ ուրանաք այս ճշմարտութիւնը։ Ասացէք խնդրեմ. ինչ կապ «գաղափարական գործչիդ» և «кулакъ»-ների մէջ, ինչ յոյս բռունցքներից հասարակ դասակարգի համար, որոնց բարեգործութեան անունով, գուցէ և ջղային միամտութեամբ, դուք խեղճ հայ գիւղացիների վզին էիք ուզում նստեցնել, ինչպէս յետոյ պարզուեցաւ։ Դուք ամենքդ «ի միոջէ բերանոյ» պընդում էիք խղճի հակառակ, թէ «այդ հողը 7000 ռուբլուց աւելի չարժէ, ոչ ոք դրանից աւելի չի տայ և այն և այն»։ Իսկ ես յորդորում էի ձեզ բարեխիղճ լինել, հաստատ գիտենալով, որ ձեր առաջարկած գինը ձեր անբարեխղճութեան վկայականն է։ Վերջը բարձրացրիք 8000-ի, բայց պահանջեցիք 18 տարուայ պայման կապել։ Որովհետև հայ գիւղացու անունով էիք խնդրում, ծանրացաք իմ նուրբ զգացմունքներուս վրայ և ես յօժարայայ դիմել հեռագրով սրբազան առաջնորդին, որ հողը 8000-ով և 12 տարով հայերին յանձնելու շնորհն անէ։ Դուք այս էլ չընդունեցիք, պնդեցիք 19 տարուայ վրայ և դիտմամբ քանդեցիք գիւղացիների գործը, որովհետև ձեր տիպի մարդիկ ճշմարիտ բարիք անել

չեն կարող, այլ թող փչելով անուն ու փառք են երազում խեղճ գիւղացիներից։

Արդ՝ ես իբրև վարդապետ յանցանք եմ գործել, որ ձեզ նմաններին, բարեխղճութեան եմ հրաւիրել, յորդորել եմ, որ ծայրայեղ զրկանք չհասցնէք կոնսիստորիային, որ նոյնպէս ձեր ազգային հաստատութիւնն է։ Արատաւոր բան է խօսածս, որ դուք հեգնութիւնների և յանցանքների շարքն էք դնում։

Ձեր և ձեր «кулакъ» ընկերներից երկուսի անբարեխղճութիւնը նկատեցին և ուրիշները ձեզանից, երբ դուք հասարակաց բարիքի անունով հողը սակարկում էիք ինձ հետ և յանկարծ մասնաւոր ձեռնարկութեան կերպարանք տուիք։ «Это частное предпріятіе», դուք ինքներդ գուացիք մէկի վրայ և այն ժամանակ ազնիւ Մազլումեան ձեր երեսով տուաւ, թէ «եթէ մասնաւոր գործ է, էլ ինչ հասարակութեան կամ բարեգործութեան անունով էք խօսում»։ Եւ դուք հրապարակեալ խայտառակութիւնից կրակն ընկաք. վրդովուեցաք, չափազանց վիրաւորուած ղգայիք ձեզ և բացարձակ յայտարարելով, որ գործին էլ չէք մասնակցելու, ելաք խռովեցաք ու մոգի ընկած հորթի նման մինչև Սեաստոպոլ գնացիք նոյն գիշերը։ Իսկ ձեր կուլակ ընկերը

այնքան ցած եղաւ, որ Զուլուսի վայրենութեամբ դիմումն արաւ ձեր եղբօր, պատուական Գէորգ Քուշնարեանին, որ Մազլումեանին իր տանից վռնդէ, որովհետև իբր թէ նա ձեզ վիրաւորեց։ Իրօք այդտեղ ոչ մի վիրաւորանք չկար, այլ կատաղութիւն Մազլումեանի դէմ, որ ձեր «նուիրական գաղտնիքին» դիպաւ։ Հարկաւ, Գէորգ Քուշնարեանը խօ Եակոֆ Սերգէիչ Кушнаревъ-ը չէր, որ այդ բարբարոս առաջարկը կատարէր։

Պ. Մազլումեանը պահանջում էր, որ եթէ դուք Կոնսիստորիայից գիշումն էք ուզում բարիքի անունով, այն ժամանակ երաշխաւորութիւն տուէք հասարակութեան ձեռքը, որ դուք յետին միտք չունիք։ Բանն աւելի խայտառակ կերպարանք ստացաւ, երբ ձեր «кулакъ» ընկերները սկսան մէկ մէկու «յետս ընկրկելու» (отступной) դումարներ առաջարկել։ Եւ ինչ ուրուց. դրանք մտածում էին խաբել ինձ էլ, գիւղացոցն էլ, և իրանց ձեռքը գցել կալուածքը, որ յետոյ դաղէին խեղճերին։

Եւ ինչ դժուար էր այդ հարիւր-հազարանոցներին, որ առանց չանայ թակելու վերջնէին հողը գիւղացոց համար, եթէ յիրաւի դրանց միտքը բարեգործութիւնն էր։

Այս ամենը տեղի է ունեցել պատուական

պ. Գէորգ Քուշնարեանի տանը, կողմնակի անձնաւորութիւն պ. Յ. Սելինեանի ներկայութեանը։

Դուք սուտ էք ասում, թէ հողին վերաբերեալ հեռագիրները ես ծածկել եմ կապալառուներից։ Ես հեռագրներից մէկի բովանդակութիւնը ասացի — «кулакъ»-ներից մէկին, նա չըհաւատաց և ես պատասխանեցի. «եթէ դուք իմ խօսքիս չէք հաւատում, որ կարող եմ ապացուցել հեռագիրը ցոյց տալով, ինչպէս հաւատամ ես ձեր խօսքին, թէ դուք ոչ ձեր գրպանի, այլ հայ ազգաստ դասակարգի վրայ էք մտածում, քանի որ ոչ մի երաշխաւորութիւն չկայ ձեզնից։ Եւ երբ մի քանի բոպէից յետոյ նոյն պարոնի հետ ներս են մտել պ. պ. Գէորգ Քուշնարեանը, Յակոբ Մազլումեանը, ես հեռագիրն ամենքին եմ տուել։ Իսկապէս այս դէպքը կատակի կերպարանք ունէր, որից սուտ փիչոդները միայն կարող են զուռնայ շինել։

Ի դէպ. և միթէ ես պարտաւոր էի իմ բոլոր հեռագիրները ցոյց տալ, որոնք հեռագրում էին լինէ և ոչ ձեզ համար։

Ձեր համախմբման մասին ես ձեր փոխարէն ամաչել եմ նոյն իսկ խօսք բանալ։ Ձեր երեսոփն էր տուել ձեր «стачка»-ն հայր Տէր-Օկ-

սէնտ աւագ քահանան, որի խօսքերից կրակուած դուք ինձ պատմեցիք փրփրոտ բերնով և ես ձեզ վրայ մի քանի խօսքով սառը ջուր լցրի, որ չմոխրանաք։ Իսկ այժմ դուք ստում էք, հերիք չէ, դուք ինքներդ ձեր արարքը դեռ հրապարակի վրայ էք դրել առանց ամաչելու։ Ես այդ մասին էլի լռում եմ, բայց հարցնում եմ ձեզ, միթէ սուտ չէ որ «աճուրդն ու կրկնաճուրդը չկայացան կապալառու չլինելու պատճառով»։

Եւ վերջապէս այսքան սուտն ուր էք տեղաւորում։

Սուտ է, թէ «լիազօրը յայտնեց, որ աճուրդը նա կկայացնէ Քիշնեւում»։ Ես ցոյց եմ տուել շատերին այն հեռագիրը, որով սրբազան առաջնորդը հրամայում էր ինձ վերադառնալ Քիշնև և յայտնում էր, որ մտադիր է Քիշնեւում աճուրդ նշանակել։

Ձեր անվերջ սուտերին, բլագօրօդնի Եակոֆ Սերգէիչ, յաջորդում է իբրև էֆֆէկտ մի իժի թոյն, որ մօդնի գործիչի խօսքերով թափում էք հոգևորականութեան վրայ, հետևեալ ֆրազով. — «հոգևորականութիւնը ամբողջովին հասարակութեան շինքին է»։

Ասացէք խնդրեմ, պ. նոտարիուս-հրէցփոխ, ինչով ենք մենք ձեր շինքին. նրանով, որ կամաւ

և յօժարութեամբ վերարկու ենք հագել, որ ձեզ նման մարդկանց ծառայենք, նրանով, որ օտարի նուիրած հոգերով յանուն վանքերի և առաջնորդի մի պատառ հաց ենք ուտում, որ մեր ապգի համար աառապենք և գեռ սիրով ու յօժարութեամբ բաժին ենք հանում հայ վարժարաններին։ Միթէ ձեր պապերի յառանգութիւնն են վայելում հոգևորականները, միթէ նրանք գօռով առանց ձեր հրաւիրանաց մտան ձեր տուն։

Մանաւորենք մեր խօսքը, ասացէք խընդրեմ, Եակոֆ Սերգէիչ, ճրը և որքան գումար էր տուել դուք անձնապէս հոգևորականութեան. ասացէք, հարուստ պարոն, ով է նստած ձեր շընքին։ Դուք ձեր խօսքերն ուղղում էք ինձ դրած նամակի մէջ. գուցէ ես եմ ձեր շընքին նստել։ Ի՞նչպէս, ճրը. երկիցս հրաւիրել էք ինձ Սեաստոպոլից գալ և ձեզ համար պատարագել ու քարոզել։ Եկել կատարել եմ ձեր խնդիրը սիրով ու գնացել, իսկ ինչով եմ ծանրացել ձեր շընքին, որ անարդ կերպով վիրաւորում էք. գոնէ խնայէք ձեր ժողովրդի ընտիր զգայմունքներին, նրանց ազնիւ արցունքներին... դուք ինձ սատիպում էք, որ անհամեստ լինեմ։

Ես ձեզ հասկանում եմ. Դուք ուզեցար մի Փոկաս ասրբել նոյն անունով, (աստատի մասին

լում եմ)։ Գիւղացիք հոտն առան, որ կարծեցեալ բարեգործներ իրանց խաբեցիք (նրանցից մէկը մի кулакъ-ի երեսին զարկեց այդ խօսքերը). ձեզնից բացադրութիւն են ուզում, իսկ դուք խուլիգանի պրովոկատարութեամբ և խիղճ ծախած չարչու նման մեղքը բեռնում էք Բենիկ վարդապետի վրայ, մտածելով «ինչ վնաս ունի, հոգևորական է, թող այս էլ քաշի»։

Դուք էլ այդ շատ լաւ հասկանում էք, բայց անհասկացող էք ձևանում, որովհետև ձեր խիղճն է հիւանդ*)։

Բենիկ վարդապետ.

Հովիս 1906 թ. № 29.

---

*) Թէպէտ և գործի դրութիւնը չի փոխւում, այնուամենայնիւ ճշմարտութիւնը պահանջում է ասել, որ վարդապետը մասնաւոր նամակով ինձ գրում է. ,,Իմ բարկութեան արդիւնքը անարդարութիւն եղաւ'' ,,այլ ես բարկութեան թափով խիստ լեզու և ծանր բառեր ուղղեցի Ձեզ'' ,,որ ես ինքս ինձ պատժեցի այդ սխալանքիս համար''։

Այնուամենայնիւ հայհոյանքը մնում է հայհոյանք և բարեկիրթ մարդու՝ այն էլ վարդապետի պատիւ չի անում։

Քիշնև, 15-ն Յուլիսի.

Մշակի այս տարուայ 136 համարում Սիմֆերոպոլի հայոց եկեղեցիների երեսփոխան պ. Յակովբ Քուշնարեանը մոռանալով, որ երեսփոխանները լրագրի միջոցաւ չեն դիմում կոնսիստորիաներին, երկու նամակ է տպել մէկը կոնսիստորիայի նախանդամ Տ. Բենիկ վարդապետի, միւս կոնսիստորիայիս հասցէին։ Ստիպուած է կոնսիստորիայս ճշմարտութիւնը պարզելու համար ի պատասխանի պ. Յ. Քուշնարեանի իւր պաշտօնական գրերից մինը Օրբաղարի Օգսենտիոս քահանայ Հայրունու անունով արձակած (թ. 1080) սրա հետ միասին ուղարկել խմբագրութեանդ խնդրելով զետեղել Հովուի մէջ։

Անդամ կոնսիստորիայի

Բարսեղ ա. քահ. Ղազանճեանց.

Պատճէն.

Բարեկրոն Ա. Օգսենտ քահանայ Հայրունի,

Ծխատէր Արմիանսկի Հայոց.

Քաղաքիդ հայ պատուաւորներից ոմանք Յ. Դաւթեան, Մ. Մսիրեան, Մ. Բախալեան և այլք սոյն տարուայ Յունիսի 14 թուակիր մի զեկուցմամբ դիմելով Ատենիս, խնդրում են, որ

Կոնսիստորիայի Օդի-Խիդաչ կոչուած հողը կապալառու Սափաքի ձեռքից առնենք և տանք իրանց անհող հայ գիւղացիներին յանձնելու միտումով։ Իրանց թղթի մէջ յարգելի պարոնները շեշտում են իրանց բարեսրտութիւնը առ հայ գիւղացին և իրանց հոգևոր հայրերի սառնասրտութիւնը առ նոսա։ Հուսկ յետոյ կարևոր են համարել յիշել, որ հայ գիւղացիք գրգռուած են, կարող են անկարգութիւններ լինել և այլն և այլն։ Առ այս կոնսիստորիայս պարտք է դնում Ձեր վրայ հետևեալը ընթեռնուլ յարգելի պարոններին և հայրական յորդորանօք խրատել, որ խոհեմութեամբ և ազնուութեամբ ընթանան։

Կոնսիստորիայս իւր պաշտօնական յայտարարութիւններից յետոյ պարբերական մամուլի մէջ Մայիս ամսին ուղարկեց իւր նախանդամին և Ատենադպրին Սիմֆերոպոլ քաղաք յիշեալ հողը աճուրդով տալու ըստ օրինի։ Տեղական մի քանի պարոններ, Արմեանսկի մի երկու պարոնի հետ միասին ցանկութիւն էին յայտնել ,,յանուն ազգասիրութեան'' (!!) վերցնել հողերը հայ գիւղացիների համար. Հայր նախանդամը առաջարկել էր նրանց մտնել աճրդախօսութեան մէջ, վստահացնելով, որ իրանց վրայ կթողնի հողը։ Սակայն յիշեալ պարոնները ոչ միայն

աճրդախօսութեան մէջ չէին մտել, այլ նոյն իսկ խանգարել թէ աճրդի և թէ կրկնաճուրդի գլուխ գալը, որպէս զի հողը իւր ներկայ գնից ամենեին չբարձրանայ, կարծես թէ այդ հողը ոչ թէ ազգային հաստատութեան էր պատկանում, այլ մի օտար ազգի. Աճրդախօսութեան անյաջողութիւնից յետոյ օտարները դիմում են կոնսիստորիայի ներկայացուցչին և խնդրում են մասնաւոր պայման կապել իրանց հետ, խոստանալով տալ 3 ր. 50 կ. մինչև 4 ր. իւրաքանչիւր դեսեատինին։ Սակայն Հայր նախանդամը տարուելով իւր ժողովրդասիրական զգացմունքից խոյս է տալիս կոնսիստորիայի համար ձեռնտու առաջարկութիւնից և չի ուզում օտարին յանձնել, այլ հայ ժողովրդի ցանկութիւնը սիրելով սիրով յօժարում է տալ հայ մեծատուններին սակաւ վարձագնով, որպէս զի հայ գիւղացիքն օգտուեն։ Այդ մասին նա ժողովներ է անում երկիցս խորհելու հայերի հետ։ Նա կոնսիստորիայի առաջ պատասխանատուութիւն յանձն առնելով, առաջարկում է յերկարել սահմանուած 6 տարին 8-9, վարձագին առաջարկում է տարեկան 9 հազար։ Յիշեալ պարոնները նկատելով թէ ժողովրդասէր մարդու հետ գործ ունեն, ծանրանում են նրա լաւագոյն զգացմունքների վրայ, խնդրում են առ

առաւելն 8000-ով տալ և այն էլ անպայման 18 տարով և առանց գրաւականի։ Հայր նախանդամը բացատրում է թէ 18 տարին ապօրինի ժամանակամիջոց է, կոնսիստորիայն այդ բանը չի կարող ընդունել, յանձն է առնում իւր անձը պատասխանատուութեան ենթարկել և յերկարել մինչև 12 տարի։ Նա խնդրում, նա զգուշացնում է թէ օտարները կվերցնեն հողը կաճ ժամանակով և 9-10 հազար վարձակնով, այն ժամանակ ուշ կլինի։ Հայ պարոնների համար իրանց բարի հովուի ձայնը «Զայն բարբառոյ յանապատի» է մնում։ Ի դէպ ժողովի ժամանակ հայ ազգասէր պարոններից մինը յոյս ունենալով որ անպատճառ չնչին գնով հողը ձեռք է բերելու, մոռանում է հայ գիւղացուն և հայրենասիրութիւնը և առաջարկում է իւր ընկերներին յետ կենալու (отступной) 3000 բուբլի, որով մերկանում է իւր ներքին աշխարհը։ Այս խօսակցութիւնը տեղի է ունենում յարգոյ պ. Գէորգ Քուշնարեանի տանը, որի բնակիչները ագնութեամբ կվկայեն այդ։ Այժմ համեմատելի է ազգասէր պարոնի և արհամարհուած «հողևոր հայրերի» ժողովրդասիրութեան չափը։ Այս ամենն կարող է վկայել խղճի մտօք պ. Փախալեանը, որ ի լրոյ գիտէ։ Վերջացած համարելով իւր գործը և չկամենա-

լով օտարների տալ առաս կապալավարձով, Հայր Նախանդամը Սրբազան Առաջնորդի հրամանով վերադառնում է Քիշնև։ Կոնսիստորիային ահագին ծախսեր անելուց յետոյ այսպիսով իւր նպատակին չհասաւ, շնորհիւ այն բանի, որ մեր հայ պարոնները կամենալով հողը վերցնել իրանց ազգային հաստատութեան՝ կոնսիստորիային բացարձակ գրկանք էին կամենում, որ ամենևին ոչ ազգասիրութիւն է, ոչ յարգանքի նշան դէպի իրանց «հոգևոր հայրերը»։ Հ. Նախանդամի՝ Տ. Բենիկ վարդապետի վերադարձից յետոյ օտար մարդիկ սկսան նամակներով և հեռագրերով խնդրել հողը։ Սրբազան Առաջնորդը ձգձգում էր օտարներին պատասխանելը, յուսալով որ հայերից դիմումն կլինի։ Եւ յիրաւի Սիմֆերոպոլից պ. Ալեքսանդրեանը հեռագրով խնդրում էր հողը օտարի չտալ, մինչև որ առաջիկայ կիւրակին ծխական ժողովում կորոշուի հողը վերցնել հայերի համար։ Սիրով համբերեց Նորին Բարձր Սրբազնութիւնը և յանկարծ կիրակին անցաւ, անցան և օրեր, երբ Տ. Օգսենտիոսը հաղորդեց թէ ծխական ժողովը վճիռ չարաւ հողը վերցնել գիւղացիների օգտին։ Բարութեան և համբերութեան բաժակն արդէն լիքն էր, «հոգևոր հայրերը» իրանց պարաքն ազնութեամբ կատարել է-

ին։ Ուստի հողը պէտք էր տալ ձեռնտու պայմանով վերցնողին։ Այդ պարոնը եղաւ Սարախը, որը գրով խնդրեց տալ իրեն 6 տարով 10,000-ով։ Պայմանը հեռագրով ընդունուեցաւ և առաջարկուեցաւ Քիշնև գալ, ուր պայմանագիրը գրուեցաւ, ստացուեցաւ 5000 ռուբլի կրաւ, 5000 կիսամեայ վարձագինը։ Այժմ յիշեալ յարգելի պարոնները կամենում են որ իրանց ազգային հաստատութիւնը՝ կոնսիստորիայն, իրանց Սրբազան Առաջնորդը օրէնքի, խղճի և արդարութեան դէմ գործ անի, պայման քանդի, կոնսիստորիայն գրամական վնաս կրէ այս նեղ օրերում, դատի ենթարկուի, ծաղր ու ծանակ դառնայ օտարների աչքում, երևայ մի հաստատութիւն՝ որ վստահութեան արժանի չէ, որ հողն յետ առնի և տայ իւր ժողովրդին։ Մի՞թէ այս ազգասիրութիւն է, մի՞թէ այս հնարաւոր խնդիր է, կամ կատարելու պահանջ։

Արդ, բարեկրօն Հայը, այս գործի մանրամասնութիւնը Ձեր խոհեմութեանը ներկայացնելուց յետոյ, Ձեր ժողովրդին էլ յանձնում ենք Ձեր հայրական յորդորներին։ Թող ազնիւ լինեն, իսկական հայրենասէր, անարդար անկարգութիւններից հեռու մնան, որ սիրելի լինեն իրանց աչքում և յարգելի օտարների աչքում։ Իսկ որով-

նետև այժմ անհնարին համարի ըստ օրինի պայմանը քանդել, ուստի կոնսիստորիայն կզիջանի յօգուտ ժողովրդի տալ Օդեխայդաջի հողը նոյն գնով, նոյն պայմաններով, եթէ Սաբախի հետ փոխադարձ համաձայնութիւն կայացնէք և նրանից վերցնէք, մինչև անգամ կարելի կլինի երեք տարի ևս աւելացնել Սաբախին։ Միայն պատասխանատուն կոնսիստորի առաջ կլինի ըստ առաջնոյն Սաբախը, և նրա հետ կապած կոնսիստորիայի պայմանը կմնայ անխախտ։

Իսկականի հետ ուղիղ է՝
Ատենադպիր կոնսիստորիայի
Կ. Յովհաննէսեանց.
Հովիս. 1906 թ. № 29.

Անճշտութիւնք

Կոնսիստորի 15 Յուլիսի գրութեան։

1). Կոնսիստորը գրում է. „... սակայն Հայր նախանդամը տարուելով իւր ժողովրդասիրական զգացմունքներից խոյս է տալիս կոնսիստորիայի ձեռնտու առաջարկութիւնից...“

Աճրդի և կրկնաճրդի ժամանակ Սիմֆերոպոլում ոչ թէ ձեռնտու գին, այլ ոչ մէկ գին առաջարկուած չէ, որովհետև ոչ

աճուրդը և ոչ կրկնաճուրդը չկայացան, ուրեմն խոյս տալու հարկաւորութիւն էլ չկար։

2). Կոնսիստորը գրում է ,,...այդ մասին նա (այսինքն նախանդամը) երկիցս ժողովներ է անում...''

Նախանդամը ոչ մի ժողով արած չէ. ժողովը կազմեցին այն անձինք, որոնք մտադիր էին հողը կապալով առնել. Նա մինչև անգամ ժողովներուն ներկայ ևս եղած չէ։

3). Կոնսիստորը գրում է ,,...պարոնները նկատելով, թէ ժողովրդասէր (!) մարդու հետ գործ ունեն, ծանրանում են նրա լաւագոյն զգացմունքների վրայ...'' Ի՞նչ հարկաւորութիւն կայ ծանրանալ ,,լաւագոյն զգացմունքների'' վրայ, քանի որ ունէինք գործ մի ,,լաւագոյն զգացմունքներով'' բռնուած մարդու հետ?

4). Իզուր կոնսիստորիան աշխատում է իր գրութիւնը վկաներով հաստատել (Գ. Քուշնարեան, Փախալեան). կարելի է գրել էլի մի քանի ազգանուններ, ով է արգելողը?

5) Կոնսիստորը գրում է ,,...այժմ համեմատելի է ազգասէր պարոնի (այսինքն իմս) և արհամարուած հոգևոր հայրերի ժողովրդասիրութեան չափը...''

Շատ հետաքրքիր է ինձ գիտենալ, արդեօք ինչ հետեւանք սուացաւ Կոնսիստորին այդ համեմատութիւնից։ Իհարկէ՝ ամեն ազգասերները հաւաքւել են Կոնսիստորում, իսկ ես և իմ ընկերները հետեւում ենք մեր անձնական շահերը։

Այն ժամանակ՝ ուր դնենք բազմիցս ասած նախանդամի ,,բարեխղճութիւն'' բառը, երբ հողի գինը 7000-ից բարձրացրինք մինչև 8000 ռուբլի, բայց ,,բարեխղճութիւնը'' պահանջեց 9000 ռուբլի։ Մթթէ կարելի է միայն խօսքով ազգասէր լինել?

-

Սիմֆէրօպոլ, 24 օգոստ.

Երկու խօսք։ Շատ խնդրում եմ չը մերժէք տեղաւորել այս իմ երկու խօսքը ձեր խմբագրութեամբ լոյս տեսնող «Մշակի» մօտակայ №№-ից մէկում։

Քիշինեվի հայոց կոնսիստորիայի անդամը «Հովւի» № 29-ում կոնսիստորիայի անունից տպել է մի գրութիւն, որի սկիզբը վերաբերում է կոնսիստորիայի հասցէին ուղղված իմ բաց նամակին (Մշակ № 136)։ Անուշադիր թողնելով առայժմ ամբողջ գրութիւնը, որը նոյն իսկ ա-

մենաներողամիտ քննադատութեան չէ դիմանում (իր ժամանակին այդ կապացուցվի), ես կոնսիստորիայի անդամի ուշադրութիւնը կհրաւիրեմ հետեւեալի վրա. նա գրում է՝ «Սիմֆէրոպոլի հայոց եկեղեցիների երէցփոխան պ. Ց. Քուշնարեանը մոռանալով որ երէցփոխանները լրագրի միջոցով չեն դիմում կոնսիստորիաներին» և այլն։ Իր հերթին կոնսիստորիայի անդամն էլ մոռանում է, որ ես, իբրև երէցփոխ, ստորագրված չեմ կոնսիստորիային և անկախ եմ։ Երէցփոխի յարաբերութիւնները կոնսիստորիայի հետ արտայայտվում են միայն ձևական հաստատումով՝ մէկ որ երէցփոխն ընտրված է ծուխից։ Այս պատճառով ես, իբրև երէցփոխ, պարտաւորված չեմ համարում ինձ դիմել կոնսիստորիային նրա և սրա լիազօրի վրդովեցուցիչ վերաբերմունքի առիթով՝ դէպի վանքապատկան հողերի աճուրդը։ Թող կոնսիստորիայի անդամը գիտենայ, որ միայն ստորագրեալը՝ ըստ իր պաշտօնի կանոնների դիմում է իր իշխանութեանը իր զեկուցումներով, իսկ ես, իբրև ծխականներից ընտված երէցփոխ, հպատակութեան մէջ չեմ գտնվում և սրա համար էլ դիմեցի կոնսիստորիային իմ բաց նամակով։ Ես ոչինչ չեմ մոռացել։

Երէցփոխ՝ Ց. Քուշնարեան.

Մշակ 1906 թ. № 223.

Սիմֆէրոպոլ, 21 օգոստոսի.

Արամ՝ դդ, դու բարկանում ես... դու անիրաւացի ես։

Բենիկ վարդապետը ի պատասխան իմ նամակների («Մշակ» № 136) «Հովիւ» № 29-ում ճգնում է կոյաջրով հեղեղել ինձ. անուանում է ինձ «կուլակ», «սատիրոս», «խուլիգան», «պրովոկատոր», գործադրում է անվայել դարձուածներ և անհիմն զրպարտում է։ Ցիշում եմ, երբ վարդապետի հետ խօսում էինք դէմ առ դէմ և ես ասացի, թէ վանքապատկան հողերի աճուրդի ողջ պատմութիւնը հասարակութեան առաջ կը դնեմ, նա պատասխանեց, որ կը կարողանայ բաւական արժանաւոր պատասխանել ինձ։ Պատասխանեց—բայց չափազանց անհիմն և բոլորովին անվայել և աղայական կերպով։ Որքան իմ նամակները չափաւոր և կօրրէկտ էին, նոյնքան էլ անպարկեշտանում է անզօր չարութիւնով փրփրող վարդապետը։ Այս տեսակ անվայել մրցութեամբ հեռու չես գնայ։ Ճշմարտութիւնը միշտ էլ ճշմարտութիւն է, իսկ սուտը—միշտ սուտ։ Խոստովանվում եմ, որ տեղաւորելով իմ նամակները «Մշակ»-ում, ես սպասում էի հիմնաւոր, գործնական և հանգիստ գրված պատասխանի։ Բայց ի՞նչ կարելի է անել մի մարդու հետ, որն

անիրաւացի լինելով, երկու կէս է լինում արդարացի երևալու համար։ Վարդապետի պատասխանը բնորոշելու համար ուշադրութիւն եմ դարձնում վարդապետի «Հովիւ» մէջ պատասխանի երեք ֆրազների վրա. 1) «ես հեռագիրներից մէկի բովանդակութիւնը ասացի» (ասացիք, բայց հեռագիրը ցոյց չը տուիք), 2) «կարող եմ տպացուցանել հեռագիրը ցոյց տալով» (բայց ցոյց չը տուիք) և 3) «հեռագիրն ամենքին եմ տուել» (ոմքեր են ամենքը—յիշում եմ, որ վարդապետի խօսքերի և «ամենքի» ցոյց տուած հեռագրի մէջ կար տարաձայնութիւն)։

Վարդապետի ամբողջ նամակը կազմված է այս տեսակի «հիմնաւոր» առարկութիւններից։ Զէ, յարգոյ գործիչ, այդպէս անել և այսպէս արդարանալ չէ կարելի, իսկ բարեկիրթ մարդու, այն էլ մի վարդապետի, վայել չէ հայհոյելը։

Այլ ես պատասխանելու չեմ, ինչպիսի կոյաջուր էլ որ վրաս թափվի։

Եպիսկոպոս Յ. Քուշնարեան.

Մշակ 1906 թ. № 223.

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԲԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

Ղարասուբազար, հոկտեմբերի 28-ին

Մենք՝ ներքոյ ստորագրող Ղարասուբազար քաքաքի հայութեան կեանքով ու նրա մամուլով հետաքրքրվող հայերս, ի մօտոյ ճանաչելով մեր հարևան Սիմֆերօպոլ քաղաքի ներկայ երէցփոխան պ. Յակոբ Քուշնարեանին, որ նա իր հասարակական ծառայութեան կոչման մէջ միշտ էլ եռանդուն, ազնիւ ու ամենագործունեայ անձնաւորութիւն է եղած և է, այլ և Ղրիմի Ս. Խաչ վանքի հողերը աճուրդով այս ամառ Սիմֆերօպոլում դրվելու խնդրում պ. Քուշնարեանը սուր հոտառութեամբ և մերձակայ ապագայի հեռանկարը լաւ ըմբռնելով՝ ամեն ջանք գործ էր դնում այդ հողերը Սիմֆերօպոլի հայ ունևորների միջոցով աճուրդով վերցնել և շրջակայ տաճկահայ գաղթականութեան յատկացնել, որի օգտաւէտ կողմերը կուրացաւ տեսնել կոնսիստորի լիազօր, տխրահռչակ Բենիկ վարդապետը, սրանով հրապարակօրէն մեր խորին զզուանքն ու բողոքն ենք արտայայտում այն անպատկառ յօդուածի դէմ, որ Քիշնևի հայոց կօնսիստորիայի նախանդամ Բենիկ վարդապետը «Հովիւ» պահպանողական օրգան շաբաթաթերթի № 29-ի մէջ

«Ձեր խիղճն է հիւանդ» յօդուածով պ. Քուշնարեանի «Մշակի» № 136-ի յօդուածին է պատասխանում։

Ինչպէս ձեզ, նոյնպէս և յարգոյ պ. Քուշնարեանին լաւ ճանաչում է Ղրիմի հայ հասարակութիւնը և դուք, որ կոչված էք ժողովրդի միջի եզակի գործունեայ անհատներին խրախուսելու դէպի գործ, դուք միանգամայն հասարակ մահկանացուի, մանաւանդ հոգևորականի, անվայել լեզուով ցեխոտում էք ամենքից յարգված մի գործունեայ անձնաւորութեան, որպիսին է անպայման պ. Յակոբ Քուշնարեանը։ Միթէ այդ է ձեր կոչումը։

Յովհաննէս Սէլինեան (17 ստորագրութիւն)

Մշակ 1906 թ. № 251.

ՔԻՇԻՆԵՎԻ ՀԱՑՈՑ ԿՈՆՍԻՍՏՈՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Բաւական ժամանակ է, որ «Մշակում» ծեծվում է Քիշնևի հայոց կոնսիստորի հարցը։ Խնդիրը շատ հասունացած է ու վերջնական լուծման կարօտ, որի մասին աւելորդ չեմ համարում ուսալ հետևեալ կարծիքս։

Նախ՝ Թեմական կենսիստորն ու առաջնորդանիստ քաղաքը պէտք է լինի Թեմի մէջ ամենաբազմահայ ու կենսունակ քաղաքը, որի նկատմամբ ռուսահայոց մէջ բացառութիւն է կազմում Քիշնևը, ուր հայութեան կատարեալ ամայութիւն է տիրում, ուստի և կենսիստորն ու առաջնորդը կամայ-ակամայ անհոգութեան ու անգործութեան են մատնվում, որոնց գեղեցիկ օրինակները տեսել և տեսնում ենք։

Երկրորդ՝ աչքի առաջ ունենալով այն ուրախ հանգամանքը, որ այսուհեան մեր Թեմական առաջնորդն ու կենսիստորի ամբողջ կազմը պէտք է լինի ընտրովի, բնական է ուրեմն, որ վերջիններիս անմիջական կենտրոնը պէտք է լինի Թեմիս ժողովրդական ներկայացուցչութիւնը, ուստի անյապաղ պէտք է Քիշնևի ներկայ կենսիստորը տեղափոխել անմիջապէս Նոր-Նախիջևան, ուր և կը նստի Թեմական առաջնորդը, շրջապատված աշխարհական ազատամիտ, ինտելլիգենտ խորհրդատուներով։ Նոր-Նախիջևան է Թեմական դպրանոցը, նա է բազմահայ գաղութը իր ինտելլիգենցիայով, իր կուլտուրական հաստատութիւններով։

Ուրեմն, առ այժմ Թեմիս հայութիւնը և հոգևոր իշխանութիւնը պէտք է ձգտեն մեր Թեմի

կոնսիստորն իր թեմական առաջնորդով տեղափոխել ուղղակի Նոր-Նախիջևան։ Ղրիմի հայութեան համար պէտք է նոր փոխանորդութիւն հաստատել, որի յաջողը կը նստէ Սիմֆերօպոլ քաղաքում։

Արդ՝ ովքեր շահագրգռված են այս խնդրով, թող իրանց կարծիքները տան ու միացած ոյժով աշխատենք Քիշինեվի կոնսիստորը փոխադրել Նոր-Նախիջևան։ Թեմի ամբողջ հայութեան շահը այդ է պահանջում։

Յակոբ Քուշնարեան

Մշակ 1907 թ. № 1

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

— —

Ս մֆերօպոլ 10 դեկտեմբերի

Խնդրում ենք չը մերժէք տեղաւորել ձեր յարգելի «Մշակի» №-ում հետևեալ տողերը։ Զարմանալի է մեր հոևոր հովիւների հայեացքը եկեղեցական-վանքապատկան այն կայքերի վերաբերմամբ, որոնք գտնվում են նրանց կառավարութեան տակ։ Եկեղեցու պաշտօնեաները մոռանում են, որ ներկայ դէպքում նրանք միայն ժամանակաւոր կառավարողներ են, իսկ այդ կալ-

ուածների իսկական տէրը դարձեալ մնում է հայ ազգը, որից և՝ իսկապէս՝ այդ կալուածները հասել են եկեղեցիներին ու վանքերին, և եթէ պատահում է, որ հասարակութիւնը ցանկանում է գործադրել նրանց բարեգործական նպատակներով, ընդսմին առանց դիպչելու հոգևորականութեան նիւթական շահերին, որոնք կապուած են այդ կայքերի գոյութեան հետ,— այդ բարի ձեռնարկութեան մէջ քիչ է մնում նկատվի մի փորձ՝ նրանց անձնական սեփականութեան դէմ։

Վերոյիշեալ դրութիւնը հաստատվում է այն միջնադէպով, որ տեղի ունեցաւ Սիմֆէրօպոլում սոյն սարվայ մայիսի առաջին օրերը։ Յիշեալ ամսի եօթին՝ Սիմֆէրօպոլի հայոց ուսումնարանի շէնքում նշանակված էր աճուրդ՝ Հին-Ղրիմի ս. Խաչի վանքին պատկանող և Պերեկոպի գաւառի Օդիյ-Խիյղանճի հողերը կապալով տալու։ Այդ աճրդի կատարելը յանձնված էր Բենիկ վարդապետին։ Այս հանգամանքի մասին «Մշակի» № 136-ում կար հաղորդակցութիւն տեղիս հայոց եկեղեցիների երէցփոխ Յ. Քուշնարեանի ստորագրութեամբ. նրա մէջ պ. Քուշնարեանը մանրամասնօրէն և բոլորովին անաչառ կերպով նկարագրում է փաստերն այնպէս, ինչպէս որ նրանք

իրականութեան մէջ տեղի էին ունեցել. այս յոդուածի տակ, «Մշակի» հէնց նոյն №-ում, յաջորդում է նոյն հեղինակի բաց նամակը, ուղղված Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի հայոց հոգևոր կոնսիստորիային առաջարկութեամբ՝ արդեօք չի ցանկանայ յիշեալ կոնսիստորիան գրաառիթով և առհասարակ պատասխանել գուստակզբունքի հարցի։

Մեր երէցփոխի այդ բաց նամակին հոգևոր կոնսիստորիան «Հովիւ» շաբաթաթերթի № 29-ում տալիս է պատասխան, որն իր բովանդակութեամբ արժանի է ուշադրութեան։ Ամենից առաջ կոնսիստորիան պատասխանի փոքրիկ առաջաբանի մէջ երէցփոխի ուշադրութիւնը հրաւիրում է (և՝ ի դէպ ասած՝ բոլորովին անհիմն) այն բանի վրա, որ նա չգիտէ, թէ ինչ կանոններով ու կարգով երէցփոխները յարաբերութիւն են ունենում կոնսիստորիաների հետ, և խրատ է տալիս նրան, որ իրան՝ կոնսիստորիային երէցփոխը պէտք է դիմէ անմիջապէս և ոչ թէ թերթերի միջոցով (ինչ կարևոր հանգամանք)։ Իր պատասխանը պ. Ց. Քուշնարեանի բաց նամակին կոնսիստորիան գրում է ոչ թէ շիտակ նրան՝ Քուշնարեանին, այլ, չգիտես ինչ պատճառով, Արմեանսկի քահանային (ըստ երե-

ւոյթին ղրղված արհամարհանքի զգացմունքից դէպի նա. սարսեցէք, պ. երէցփոխ)։ Այդ պատասխանում կամ յօդուածում կոնսիստորիան՝ իբրան վայել վեհութեամբ՝ զիջանելով իր հօտի ձանձրացուցիչ ու զահլա տանող տենչանքներին, իր հոգևոր հովուի միջոցով տալիս է մի շարք կրթիչ դասեր, պարտաւորեցնելով վերոյիշեալ հոգևոր հովուին իր մոլորված ոչխարների վերաբերմամբ ցոյց տալ զուտ հայրական ինամք, սովորեցնելով և բացատրելով նրանց, որպէս զի նրանք ազնիւ և համեստ լինեն պահանջների մէջ և հեռու ապօրինի հակումներից. սրանից յետոյ կոնսիստորիան դիմում է վանքապատկան հողերի աճրդին վերաբերվող դէպքի փաստային կողմի իւրատեսակ լուսաբանութեան ու նկարագրութեան։ «Ակնածութեամբ» կարդալով կոնսիստորիայի թղթի այս մասը, ակամայ գալիս ես այն եզրակացութեան, որ՝ հողերն իրանց կապալով տալու համար՝ կոնսիստորիային առաջարկութիւն անող անձերը և ինքը հայոց հոգևոր կոնսիստորիան երկու թշնամի կողմեր են, երկու առանձին ցեղեր, որոնք իրար հետ ոչինչ ընդհանուր չունեն, կամ լաւ է ասել — առևտրական երկու ձեռնարկութիւններ, որոնց մասնակցողները կարծես աշխատում են պլոկել ի-

բար։ Ամենից առաջ՝ կենսիստորիայի հէնց ա-
ճուրդ նշանակելը և յայտարարելը, իսկ յետոյ
նաև՝ հայոց վանքին պատկանող հողի աճուրդի կա-
տարելը, թէև զուտ իրաւաբանական կողմից
թոյլատրելի է, բայց ազգային տեսակէտից դա-
տապարտելի է և ոչ մի բանով չարդարացնող,
մանաւանդ ներկայումս, երբ արդէն էջմիածնում՝
վերջին համագումարում կայացաւ պատգամա-
ւորների ժողովի վճիռը, որով եկեղեցական-վան-
քապատկան հողերը պէտք է ճանաչվեն որպէս
ժողովրդական համայնականացրած սեփականու-
թիւն, իսկ այդ կայքերի եկամուտները պէտք է
յատկացվեն հայ ժողովրդի ազգային-կուլտուրա-
կան կարիքների ապահովացման։ Կենսիստորիան,
ի հարկէ, կարող է առարկել, թէ այդպիսի վճիռ
դեռ նոր է կայացել, աճուրդից յետոյ. այո, բայց
բանն այն է, որ այսպիսի հայեացք եկեղեցական-
վանքապատկան հողերի վրա՝ որպէս ազգային
սեփականութեան վրա՝ վաղուց, շատ վաղուց
գոյութիւն է ունեցել և ունի հայ ժողովրդի հա-
մոզմունքների և հասկացողութիւնների մէջ. այս
հայեացքը պահվում է ժողովրդական ոգու խոր-
քերում։ Պատգամաւորների ժողովը՝ այսպէս ա-
սած՝ վաւերացրեց նրան, ապրելու իրաւունք
տուեց, և ներկայումս՝ այդ գործերը կառավա-

բելու համար՝ արդէն կազմակերպվում են բայոնական հիմնարկութիւններ՝ քառանդամեան ֆորմուլայի հիմունքներով։

Այսպիսով երբ կայ ցանկութիւն և առաջարկութիւն հէնց իրա՝ հայ հասարութեան կողմից, — թէկուզ յանձին մի փոքրիկ խումբ մարդկանց, — վանքապատկան հողերն իր վրայ առնելու նպատակով, որ նրանցից եկամուտներ ստացվեն հայ հասարակութեան կարիքների համար, — այդ հողերի աճրդի կատարումը ազգային ինքնագիտակցութեան համար վիրաւորական է։

Շարունակելով կօնսիստորիայի թղթի ընթերցանութիւնը, ուր խօսվում է բանակցութիւնների մասին, որոնք տեղի ունեցան յիշեալ մի խումբ անձերի և կօնսիստորիայի ներկայացուցիչ՝ Բենիկ վարդապետի միջև, ուղղակի վարանում ես և ինքդ քեզ հարցնում. վայելէ արդեօք հոգևոր կօնսիստորիային, որ պարտական է պաշտպան կանգնել քրիստոնէական սիրոյ և ճշմարտութեան սրբազան աւանդներին, խորասուզվել ու ընկղմվել կեանքի այդ կեղտի մէջ, արտայայտել առևտրականական այնչափ հաշիւ և փողային հետաքրքրութիւն։ Ախր մի նայեցէք՝ ինչպէս ծախս է անում կօնսիստորիայի ներկայացուցիչը։ Հողն առաջ տրվում էր տարեկան 7000 ռուբ-

լով. սիմֆերոպոլցիք ու արմեանսկցիք, ականջ դնելով Բենիկ վարդապետի աղերսին և արտասուքներին, առաջարկում են 8000 ր.։ Սկզբում ներկայացուցիչը կարծես համաձայնում է առաջարկութիւններին, իսկ յետոյ՝ պայմաններից մի քանիսը գտնում է անընդունելի (ժամանակամիջոցի պայմանը), ապա իբրև թէ դրագրութիւն է ունենում կօնսիստորիայի հետ և յայտնում է, որ կօնսիստորիան համաձայն է զիջանել հողը տարեկան միայն 9000 բուբլով և այն. մի խօսքով՝ իր բոլոր գործողութիւնների մէջ ցոյց է տալիս դրդումներ և ձգտումներ «գործի մարդու», որը միայն մի նպատակ ունի—«թաւ ձգելու», իսկ ինչ որ հասարակական շահեր, բաներ... բէ, գետինն անցնեն դրանք բոլորովին։ Ըստ երևոյթին կօնսիստորիան էլ համաձայն է իր ներկայացուցչի այս կշռադատութիւնների հետ, եթէ նա, արդէն ձևական պայման կապելով պ. Սափաքի հետ՝ տարեկան 10,000 բուբլով, առաջարկում է անհանգիստ և ձանձրացնող ազգասէրներին, որոնք տակաւին չեն կորցրել իրանց յոյսերը՝ այդ հողը կապալով վերցնելու համար, համաձայնութեան գալ՝ պ. Սափաքի հետ, որպէս զի սա զիջանէ հողի կապալը յիշեալ անձերին, բայց միայն հէնց նոյն հիմքերի վրա։ Կօնսիստորիայի

այսպիսի հայրական հոգսի համար ազգասէրները, ի հարկէ, պէտք է նրան շատ շնորհակալ լինեն, բայց մենք կարծում ենք, որ նրանք ինքներն էլ կը գտնեն պ. Սափաքի ճանապարհը, եթէ բանը դրան մնայ։ Կոնսիստորիան հաւատացնում է, որ նա ոչ մի կերպ չէր ուզում հողն օտարներին տալ, որ նա պատրաստ էր ամեն զիջողութիւններ անելու, որ նա բոլոր ոյժերով աշխատում էր եօլա տանել հէնց իր անդամակիցների հետ. բայց չէ՞ որ վերջ ի վերջոյ նա հողը էլի տուեց ոչ թէ հայերին, այլ պ. Սափաքին տարեկան 10000 ռուբլով։ Իսկ հայերը առաջարկեցին միայն 8000 ռ., նշանակում է՝ հանելուկը շատ հեշտ է լուծվում։ Հայերն իրանք են մեղաւոր. ինչու՞ նրանք չը տուին 10,000 ռ., և եթէ այդ պատահէր, այն ժամանակ կոնսիստորիան, համարձակ կարծում ենք, չէր ակնարկի ոչ մի համախմբման կամ մութ դրդումների մասին յիշեալ մի խումբ անձերի կողմից, իսկ նրա պատուելի ներկայացուցիչը նրանց չէր անուանի «կուլակներ», «խուլիգաններ» և այլն։ Այս ամբողջից միայն այն է պարզվում, որ մեր հոգևորականութեան և հասարակութեան մէջ ոչ մի հոգևոր կապ գոյութիւն չունի, իսկ մի անգամ որ այդպէս է, ուրեմն ուրիշ շահերի, զուտ կեանքի շա-

հերի համերաշխութեան մասին խօսք անգամ լինել չէ կարող, և այնտեղ, ուր կայ զուտ փողային հարց, կօնսիստորիան խուլ է մնում ազգային կարիքներին։

Սրանով մենք կը վերջացնէինք մեր տողերը, եթէ «Հովուի» նոյն №-ում չը լինէր մի ուրիշ նամակ, նոյն մեր չարաբաստիկ երէցփոխ Յ. Քուշնարեանի։ Իր բովանդակութիւնով այդ նամակը, ի հարկէ, հասարակական ոչ մի հետաքրքրութիւն չի ներկայացնում, մանաւանդ որ ընթերցողը, կարդալով կօնսիստորիայի նամակը, կարող է կատարեալ գաղափար ունենալ վանքապատկան հողերի միջնադէպքի մասին. բայց նա հետաքրքրական է զուտ հոգեբանական հայեցակէտից, որ նկարում է մեր եկեղեցու բարեպաշտ հովիւների ներքին, հոգևոր աշխարհահայեացքը։ Կարդալով այդ գոհար—արտադրութիւնը, ինքդ քեզ հարցնում ես. «Արդեօք պատահմամբ «Մօսկօվսկի Վեդօմօստիի» կամ սևհարիւրեակի լրագիր «Վէչէի» մի համարը չէ՞ ընկել ձեռքս», որովհետև այդ նամակի ոճը ապշելի կերպով յիշեցնում է մեր անուանած «պատուելի» թերթերի աշխատակիցների արտադրութիւնները։ Բայց երբ հասնում ես ծայրին և տեսնում ես տխրահռչակ Բենիկ վարդապետի

ստորագրութիւնը, ամեն բան պարզվում է։ Նայեցէք, ինչ գեղեցկութիւններով լիքն է «յարգելի» վարդապետի նամակը սկզբից մինչև վերջը։ Վարդապետը ուրիշ կերպ չէ կարողանում գրել և խօսել, բայց եթէ փրփուրը բերնին։ Ինչեր այստեղ չը կան։ Ե՛ւ «կուլակ», և՛ «խուլիգան», և՛ «զուլուս», և՛ «պրովոկատոր» և այլն և այլն։ «Վէչէ» թերթի բոլոր ընտիր արտայայտութիւնները։ Խնդճ պ. Քուշնարեան և ձեր կապալառու ընկերներ։ Համափոփոխութեան ենթարկվեցիք, հա։ Դուք հարկաւոր կրթութիւն էլ չէք ստացել, ձեր խիղճն էլ մաքուր չէ, պ. Քուշնարեան, դուք բարեգործութեան ծածկոյթի տակ ինչ-որ գաղտնի մտքեր ունէք, դուք խուլիգանական հակումներ ունէք, և այլն և այլն։ Բայց կացէք. մի՞թէ այդ գրողը հոգևոր անձն է, եկեղեցու սպասաւոր։ Հապա ո՞ւր է քրիստոնէական այն հեզութիւնը, որի մասին այնքան շատ են սիրում խօսել պատուելի Տարտիւֆները։ Ո՞ւր է այն եղբայրական սէրը դէպի մերձաւորը, որի մասին այնքան շատ և այնպէս ջերմեռանդօրէն, երբեմն նոյնիսկ արտասուալից աչքերով, կանչում են այդ յարգելի քարոզիչները Աստծու տաճարում։ Ախր եթէ նոյն իսկ բոպէապէս թոյլ տանք, որ պ. Քուշնարեանը գրել է իր նամա-

կում աշկարա մի սուտ, մի՞թէ այդ իրաւունք է տալիս Բենիկ վարդապետին այդպիսի կատաղութեամբ յարձակվելու մարդու վրա և ատամների կրճատոցով ամբողջ մաղձը թափելու հէնց իր մերձաւորի վրա։ Մենք առաջ չենք բերի իսկական արտայայտութիւնները։ Միայն մի բան կարող ենք ասել, որ պ. Քուշնարեանի նամակը իր համեստութեամբ, որևէ աւելորդ խօսքերի բացակայութեամբ և գործի փաստային կողմի կատարելապէս ճիշտ նկարագրութեամբ ոչ ոքի չէր կարող դիպչել, ևս առաւել վիրաւորել, և, ընդհակառակը, Բենիկ վարդապետի պատասխանը՝ աղաւաղելով ճշմարտութիւնը՝ բոլորովին անիրաւացի վիրաւորանքներ է հասցնում ոչ միայն պ. Քուշնարեանին, այլև Սիմֆերօպոլի հայ հասարակութեան, որովհետև Բենիկ վարդապետը՝ վիրաւորելով մեր յարգելի անդամակցին, այն է դեռ առանց առիթի ու հիմքի, միևնոյն ժամանակ, վիրաւորում է իրան հասարակութեան, որը կատարելապէս հաւատացած է, որ այն մի խումբ անձերը, որոնք ցանկանում էին կապալով վերցնել վանքապատկան հողերը, ոչ թէ իրանց շահերին էին հետամտում, այլ ուզում էին, օգնել խեղճ հայ հողագործներին և երկու ուսումնարանների։

Այս պատճառով մենք, նելքևում ստորագրողներս, չենք կարող չարտայայտել մեր վրդովմունքը հասարակութեան մեր յարգոյ անդամներին ուղղված ինսինուացիաների առիթով, այն անդամներին, որոնք ցանկացան բարի գործ անել՝ առնելով իրանց վրա ամենախեղճ հայ երկրագործների կենցաղի բարելաւութիւնը՝ վանքապատկան հողը կապալով վերցնելու ճանապարհով։ Միաժամանակ կտրականապէս յայտնում ենք, որ Բենիկ վարդապետի մեղադրութիւնը, իբրև թէ նրանք ուզում են օգտվել յիշված հողից իրանց անձնական վաստակի համար՝ բարեգործութեան անուան տակ, ակնյայտնի սուտ է։ Այն անձերը, որոնց յարգոյ վարդապետը ճրգնում է վիրաւորել իր կծու խօսքերով, այնքան ժողովրդականութիւն են վայելում մեր հայ հասարակութեան մէջ, որ հոգևոր հովուի բառավիժումները և կաշուց դուրս գալը մեր հասարակութեան աչքերին ներկայանում են շատ խղճուկ և ամենաքիչը՝ ծիծաղելի։ Մեր յիշողութեանն է գալիս հանգուցեալ Խորէն եպիսկոպոս Ստեփանէի յայտնած միտքը. «Եթէ Տէրն Աստուած մեզ հոգևորականներիս վրա ուղարկէր համաճարակ հիւանդութիւն խօլերայի կամ ժանտախտի նման, և մենք՝ բոլոր հոգևորականներս,

և ես էլ նրանց հետ, ոչնչանայինք, այն ժամանակ հայոց ազգը ազատ շունչ կառնէր»։

Մ. Ալեքսանակի և Կ. Ալեքսանակի — կալուածատէրք, Կ. Թարասեան — վաճառական, Ռ. Խաչատրեան — տեսուչ Սիմֆերոպոլի բայոնի (պետական), Խ. Քէլեան — կալուածատէր, Յ. Սելինեան — նախագահ աղքատաց հոգաբարձութեան, Լ. Թոսունեան — վաճառական, Ա. Գալճեան — դերձակ, Ս. Պետրոսեան — հաշուապահ, Ա. Գասպարեան — խահվէճի, Յ. Զաքիեան — երդուեալ-հաւատարմատար, Գ. Թոսունեան — նկարիչ, Ռ. Թղլիեան — պրովիզոր, Ց. Դաւթեան, Կ. Սեֆերեան — կալուածատէրք, Ս. Բաբեան — պրովիզոր, Գ. Քեպապճեան — վաճառական, Գ. Խորոսանեան — ուսանող, Ա. Թոփալեան — կալուածատէր, Վ. Բաբեան, Ն. Ալեքսանակի, Ե. Գրիկեան, Վ. Բահաթրեան, Մ. Թարախչեան — ուսուցիչք։

Մշակ 1907 թ. № 5

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԲԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

— —

Սիմֆէրօպոլ, յունվարի 8-ին.

Օդի-Խիյղաճի վանքապատկան հողերի աճրդի ողջ գործը կատարվել է իմ աչքերի առաջ և ես, ինչպէս Սիմֆէրօպոլի հայերի հասարակական գործերով փոքր ի շատէ հետաքրքրվողների մեծամասնութիւնը, լաւ տեղեակ եմ այդ խնդրին։ Կարդալով «Հովիւ» շաբաթաթերթի № 29-ի մէջ ձեր պատասխանը մեր երեսփոխան պ. Քուշնարեանին, ես ապշեցայ ձեր ստերի առաջ, իսկ ձեր պատասխանելու ձևի մասին երկու կարծիք չէ կարող լինել և նա, այդ պատասխանը՝ քիչ բան է աւելացնում ձեր պատուին։ Դուք ճգնում էք (և բոլորովին ի զուր) ապացուցանել, որ վանքապատկան հողերը վերցնել կամեցող անձինք իրանց անձնական շահի ետևից էին ընկած և ուզում էին շահվել՝ բարեգործութեան դրօշակի տակ։

Մեր հոգևորականութեան (ի հարկէ՝ ոչ բոլոր) արշինով չափել այն մարդկանց չէ կարելի։ Կան մարդիկ, որոնք անհրաժեշտութեան դէպքում կհաստատեն, որ հողի աճրդով վերցնելու պայմանագիրը կազմել և արտագրել եմ ես և այդ պայմանների մէջ պարզ ասված է, թէ որտեղ

էր գնալու հողից ստացված արդիւնքը, թէ որ-պիսի հսկողութիւն (կօնտրոլ) էր լինելու և այլ մանրամասնութիւններ։ Երբ մի քանի անձանց մէջ միտք յղացաւ վերցնել վանքապատկան հողերը, պ. Քուշնարեանը քաղաքում չէր, բայց այդ անձինք՝ լաւ գիտենալով, որ նա չի հրաժարվի մասնակցել բարի գործում աղքատներին օգնել, առաջնորդին տուած իրանց առաջին հեռագրի տակ նրա ազգանունն էլ տեղաւորեցին։ Եւ պ. Քուշնարեանը, քաղաքս վերադառնալով, ամենայն պատրաստականութեամբ համաձայնվեց մասնակցել այս բարի գործին։ Որ այդ բոլոր մարդիկը կամենում էին անշահասիրութեամբ ծառայել բարեգործութեանը՝ կը հաստատեն թէ նրանց բարեկամները և թէ թշնամիները, իսկ դուք ձեր վերաբերմունքով սպանեցիք մի գեղեցիկ գործ։

Այս էլ կայ, որ մեր սիրելի հոգևորականութիւնը (սակաւ բացառութեամբ), ինչպէս այս դէպքում, նոյնպէս և ընդհանրապէս, ցոյց է տալիս իրան այնպէս, ինչպէս որ գիտէ ձեզ ողջ ազգը՝ «մոլինքն՝ դուք եղել էք մշտապէս արքունիքներ սեփական բարիքի համար։

Ս. Ց. Պետրոսեան.

Մշակ 1907 թ. № 27.